

Լրատու

Թիւ 19
Ապրիլ 2011

Կիպրահայ Զամայնքի Պետական Ներկայացուցիչի Գրասենեակի

Սիրելի հայրենակիցներ,

Պաշտօնավարութեանս գրեթէ հինգ տարիներուն ընթացքին, «Լրատու»ի եռամսեայ հրատարակութեամբ այցելեցի ձեր բոլորին տուները: Այս հրատարակութիւնները գործունէութիւնս դարձուցին աւելի յստակ ու թափանցիկ, միեւնոյն ժամանակ, առիթը ընծայեցին ինծի ձեզ հետ բաժնետէլու զիս մտահոգող, գաղութը անհանգստացնող եւ այս կղզիէն ներս մեր ապագան բնորոշող հարցերը:

«Լրատու»ի այս թիւով, որ առաջին հնգամեակին վերջին հրատարակութիւնը պիտի ըլլայ, ձեզ պիտի լուսաբանեմ ապագայի ծրագրումներուս մասին, հիմք ունենալով առաջին շրջանի իրագործումներս:

Վստահ եմ, բոլորդ ստացած էք արդէն հնգամեայ պաշտօնավարութեանս ընթացքին ձեռքբերուած հիմնական իրագործումներու գրքոյկը: Պիտի տեսնէք, թէ հոն կան ամբողջացած աշխատանքներ, սակայն կան նաեւ ծրագիրներ, որոնք պետք է հետապնդուին, հասնելու համար իրենց վերջնական լրումին:

Առաջնահերթութիւնը պիտի տամ մեր երեխաներուն համար ստեղծուելիք Զայկական Մանկամտորին, որ երկար տարիներու վրայ երկարող աշխատանքին իբրեւ արդիւնք, դրական յաջողութեամբ պսակուեցաւ: Նախնական աշխատանքները ամբողջացած են, կը մնայ յառաջիկայ ամիսներուն գործնական բաժինին անցնելով, իրականութիւն դարձնել այս նիրաժեշտ նկատուող կառոյցը, դիւրացնելու

համար երկար ժամեր աշխատող երիտասարդ ծնողներուն առօրեայ կեանքը: Մանկամսուրին ստեղծումով, փոքրիկները իրենց կեանքի առաջին ամիսներէն հայկական ապահով միջավայրին մէջ պիտի մեծնան եւ ապագային պիտի շարունակեն յաճախել Նարեկի մանկապարտեզը եւ ապա նախակրթարանը:

Ձեզմէ շատեր, որոնք Նարեկ Վարժարան գաւակ ունին կրնան վկայել, թէ Նարեկ Հայկական Վարժարանները վերելքի մէջ կը գտնուին, Տնօրէնութեան ու Հոգաբարձական կազմին միացեալ աշխատանքին շնորհիւ: Բարելւաման ծրագիրները աստիճանաբար կը կիրարկուին եւ կրթական մակարդակը հետզհետէ կը բարձրանայ, գոհացում տալով ծնողներու ակընկալութիւններուն: Յաջորդող տարիներուն, Հայկական Մանկամսուրին եւ Նարեկ Վարժարաններուն բարգաւաճման առնչութեամբ ջանք պիտի չխնայեմ ու նոյն ձեւով հետամուտ պիտի ըլլամ այս գոյգ կառոյցներուն յաւելեալ զարգացման:

Գալով Հայկական երկրորդական ուսման եւ յատկապէս Մելգոնեան Կրթական Հաստատութեան վերաբացման կարելիութիւններուն, այս բարդ հարցը յատուկ ուշադրութեանս կեդրոնը գրաւեց ու ստացա՞ծ բոլոր առաջարկներուն նեցուկ կանգնելով, կարելիս ըրի բարուք լուծում մը գտնելու: Պիտի շարունակեմ աջակցիլ այս գծով ինձի մօտեցող բոլոր անհատներուն ու խմբաւորումներուն, պատրաստակամութիւնս յայտնելով, որեւէ ատեն բարեխօսելու եւ միջամտելու թէ՛ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Կեդրոնին եւ թէ Կիպրոսի Կառավարութեան մօտ:

Պետական Ներկայացուցիչի պաշտօնին կոչուելէս

քիչ ետք, մի քանի առիթներով եւ գործնական գետնի վրայ փորձառութենէս պարզուեցաւ, թէ Փոքրամասնութիւններու Ներկայացուցիչներու հանգամանքը լճացած վիճակ կը պարզէ: Նախաձեռնութիւնը առնելով եւ խորհրդակցելով պաշտօնակիցներու՝ Մարոնիթ ու Լատին համայնքներու ներկայացուցիչներուն հետ, որոշեցինք այս հարցին լուծում մը գտնել: Անոնց քաջալերանքը ունենալով եւ ի մտի ունենալով Կիպրոսի հիմնահարցին բարդ իրավիճակը, ինչպէս նաեւ չխաչաձեւելու կղզին վերամիացնելու տարւած քաղաքական բարձր մակարդակի երկխօսութիւնները, միջին լուծումի մը յանգեցանք: Առանց հիմնական փոփոխութեան ենթարկելու Կիպրոսի սահմանադրութեամբ հաստատուած օրէնքը եւ օգտագործելով Ներկայացուցիչներու հանգամանքին առնչուած սահմանումները, կարողացանք զգալիօրէն բարելաւել մեր հեղինակութիւնը: Յետ այսու, Կրօնական Փոքրամասնութիւններու Ներկայացուցիչները իրաւասու ձայնով պիտի մասնակցին խորհրդարանի հովանաւորութեան տակ գործող բոլոր յանձնախումբերուն մէջ եւ Կիպրոսի Յանրապետութեան օրէնսդիր եւ գործադիր իշխանութիւններուն առնելիք որոշումները, որոնք կ'առնչուին մեր համայնքին հետ, Ներկայացուցիչին համամտութեամբ միայն պիտի գործադրուին, այլապէս անոնք հարկատու պիտի ըլլան հիմնաւորելու իրենց դիրքորոշումը: Անշուշտ այս ձեռքբերումը իրականութիւն դարձաւ շնորհիւ Կիպրական տեղական կուսակցութիւններու ցուցաբերած աջակցութեան, որոնց հետ շարք մը հանդիպումներ ունեցանք, նախքան բարեփոխուած օրէնքին ձեւաւորուիլը: Յաջորդաբար՝ 24 եւ 31 Մարտի Խորհրդարանի Օրէնսդիր Յանձնաժո-

ղովի նիստերուն, Ներքին Գործոց Նախարարութեան Ընդհանուր Զարտուղարին, Արդարադատութեան Նախարարութեան ու Տնտեսութեան Նախարարութեան ներկայացուցիչներուն, ինչպէս նաեւ Կիպրոսի Հանրապետութեան Ընդհանուր Դատախազին ներկայութեամբ ու համամտութեամբ, օրէնքի բարեփոխումը որդեգրուեցաւ, որմէ ետք Խորհրդարանի 5 Ապրիլ 2011 թուականի օրակարգին վրայ ընդգրկուելով, միաձայնութեամբ վաւերացուեցաւ եւ ուժ ստացաւ:

Հետեւաբար, եթէ ուզենք արդար ըլլալ ու ընդհանուր գիծերու մէջ արժեւորում մը ընել, պէտք է ընդունինք, թէ նախորդ հինգ տարիներուն ընթացքին, արմատ նետած երեւոյթներ փոփոխութեան ենթարկուեցան Կիպրահայ գաղութի կեանքէն ներս ու տակաւին շատ բաներ կան ըլլալիք յաջորդող տարիներուն: Ներքին իմաստով, Կիպրահայութիւնը շատ անելի միասնական է քան երբեք, Պետական Ներկայացուցիչ, Կաթողիկոսական Փոխանորդ եւ Նարեկ Հայկական Վարժարաններ կապերը սերտ են, միջ-կուսակցական եւ միութենական հակամարտութիւններ գրեթէ գոյութիւն չունին, մամուլի հրատարակութիւնները մնացին փոխադարձ հանդուրժողականութեան սահմաններուն մէջ ու տարեկան դրութեամբ Հայրենիքէն հրաւիրուած հանրաժանօթ համոյթներով՝ գաղութիս մշակութային կեանքը ծաղկեցաւ: Գալով քաղաքական ոլորտին, բազմաթիւ փոխադարձ այցելութիւններով ու աջակցութիւններով, ինչպէս նաեւ վերջերս Ներկայացուցիչի Հանգամանքին բարելաւումով, պատմական յաջողութիւն արձանագրուեցաւ ու Հայ համայնքի դիրքը արտաքին ճակատի վրայ ամրապնդուեցաւ:

Յունուար 17ին, միօրեայ պաշտօնական այցելութեամբ Կիպրոս ժամանեց ՀՀ Նախագահ Ն.Վ. Սերժ Սարգսեան, որու մանրամասնութիւնները Լրատուի յաջորդող էջերուն մէջ նշուած են:

Յիշեցնեմ, թէ Մայիս 8-ին, դարձեալ ծրագրած ենք Մակարայ Վանք այցելել՝ համագործակցութեամբ Ազգային Իշխանութեան: Այս գծով, ներկիակ պիտի գտնեք ուխտագնացութեան կապակցութեամբ թերթիկը ու պիտի խնդրէի մասնակիցներէն, անմիջապէս կապ հաստատել գրասենեակիս հետ արձանագրուելու համար:

Այս հանգրուանին, յարմար կը նկատեմ Պետական Ներկայացուցիչի ընտրութիւններուն թեկնածութիւնս առաջադրող կնքահայրերուս անունները յայտարարել, որոնց սրտանց շնորհակալութիւն կը յայտնեմ: Պատշաճութիւնը յարգելու համար, նախ յիշեմ Տոքթ. Արմիկ Նաճարեանը, երգիչ Յովիկ ՏԷմիրճեանը, Պրն. Եղիա Պոյաճեանն ու Պրն. Աբրահամ (Ապի) Եագուպեանը:

Առ այժմ, հրաժեշտ առնելով ձեզմէ յոյսով եմ, որ 11 Մայիսին պիտի հանդիպինք OCCIO սրահին մէջ տեղի ունենալիք հաւաքին եւ 22 Մայիսին, ձեր քըլէներով պիտի ճԱՐՈՒՆԱԿԵՆՔ ՄԻԱՍԻՆ սկսուած աշխատանքը:

Ս. Յարութեան տօնին առիթով ընդունեցէք իմ սրտագին բարեմաղթութիւնները:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց, օրհնեալ Է Յարութիւնն Քրիստոսի:

Վարդգէս Մահտեսեան
Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ

ԵՌԱՄՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Օտարահպատակներու եւ Ներգաղթի Բաժանմունքին (Aliens & Immigration Unit) հետ կապուած մեր գրասենեակի աշխատակները, սովորական ձեւով շարունակուեցան :

Հոս յիշենք, թէ յետ այսու Օտարահպատակներու եւ Ներգաղթի Բաժանմունքը, կեցութեան հրամանները (Residence permits) նորոգելու ժամանակ, կը պահանջէ կեցութեան հրամանին բնօրինակը (original) կցել դիմումին հետ, նոյնիսկ եթէ տակաւին օրեր կամ շաբաթներ ի գօրու է ժամկետը: Հետեւաբար, բոլոր անոնք, որոնք պիտի ճամբորդեն ու ետ վերադառնան Կիպրոս նախքան հրամանին ժամկետը, նախընտրելի է վերադարձին դիմում կատարեն նորոգելու համար կեցութեան հրամանը:

Նշանակում

Երեքշաբթի, 4 Յունուար 2011 թուակիր նամակով, Ներքին Գործոց Նախարար Նեոքլիս Սիլիկիոտիս գործածելով Համայնքներու Օրէնքներու գծով սահմանուած իր իրաւասութիւնները, Պրն. Մկրտիչ Գոյլումճեանը նշանակեց Զարամանգատէ շրջանի թաղապետ (Մուխթար): Այս ուրախ առիթով, Պետական Ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեան, շնորհաւորագիր մը յղեց նորանշանակ թաղապետին, անոր մաղթելով բեղուն ու յաջող գործունեութիւն:

Այցելութիւն «Գալայճեան» Հանգստեան Տուն

Հայկական Ս.Ծնունդին կեսօրուայ ժամերուն, Հինգշաբթի 6 Յունուար 2011ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեան, ընկերակցութեամբ Թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ Վարուժան Արք. Հերկելեանի, այցելեցին «Գալայճեան» Հանգստեան Տուն եւ Ամանորեայ ու Ս. Ծննդեան լաւագոյն մաղթանքներով եւ անհատական նը-



Լերներով պատուեցին մեր տարեց հայրերն ու մայրերը:

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի Պետական-պաշտոնական այց

Կիպրոսի Հանրապետության Նախագահ Տիմոթիոս Խրիստոֆիասի հրավերով Երկուշաբթի, 17 Յունուար 2011ին, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյան, միօրեայ պետական մակարդակի այցելութիւն մը տըրուաւ Կիպրոս, ընկերակցութեամբ Առաջին Տիկնոջ, նախարարներու եւ բարձրաստիճան պաշտօնակատարներու: Կիպրոսի օդակայան ժամանման՝ Սերժ Սարգսյանն ու առաջին տիկինը, պետական շքախումբին կողքին, դիմաւորուեցան Տեր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններու կողմէ:

Առաջին հերթին, Սերժ Սարգսյան դռնփակ հանդիպում մը ունեցաւ Հանրապետության Նախագահ Տիմոթիոս Խրիստոֆիասին հետ եւ ապա ընդլայնուած կազմով, որու անարտին երկու երկիրներու նախագահները ստորագրեցին համաձայնագիր մը:

Նախագահին հետ հանդիպումէն ետք, Սերժ Սարգսյան



Եան տեսակցեցաւ Կիպրոսի Ուղղափառ Եկեղեցւոյ պետ Խրիստոստոմոս Բ. Արքեպիսկոպոսին հետ, ապա իր պատուիրակութեան հետ ուղղուեցաւ դէպի Կիպրոսի Առեւտուրի ու Ճարտարարուեստի կեդրոնը (KEBE), ուր բացումը կատարեց Կիպրոս-Հայաստան գործարարներու խորհրդրդածողովին:

Նոյն օրը, կէսօրէ ետք, ան հանդիպեցաւ Կիպրոսի Խորհրդարանի Նախագահ Մարիոս Կարոյեանին հետ, որմէ ետք ելոյթ ունեցաւ Կիպրոսի Խորհրդարանէն ներս:

Նախագահ Սերժ Սարգսեան ու իր պատուիրակութիւնը, յետմիջօրէին այցելեցին նաեւ Նիկոսիոյ Նարեկ Վարժարանը, ուր դիմաւորուեցան Հոգաբարձութեան, Տնօրէնութեան, Ուսուցչական կազմին ու աշակերտութեան կողմէ:

Իսկ երեկոյեան, անոնք հանդիպում ունեցան Կաթողիկոսական Փոխանորդ Վարուժան Արքեպիսկոպոսին եւ Թեմական ու Վարչական կազմի անդամներուն հետ: Այս հանդիպումէն ետք, ՀՀ Մշակոյթի Նախարարին եւ Կիպրոսի Կրթութեան Նախարարին կողմէ բացումը կատար-

Լեցաւ Մեսրոպ Մաշտոցի Մատենադարանի ձեռագիրներու ցուցահանդեսին, Կիպրոսի Մշակոյթի Նախարարութեան կեդրոնին մէջ: Գիշերը, Hilton Park պանդոկին մէջ, Զանրապետութեան Նախագահ Խրիստոֆիաս՝ ի պատիւ Զայաստանի Նախագահին ընթրիք մը կազմակերպեց, որուն ներկայ գտնուեցան Կիպրահայ գաղութի պատկառելի անձնաւորութիւններ:

18 Յունուարի առաւօտուն Կիպրոսէն չմեկնած, Նախագահ Սերժ Սարգսեան ծաղկեպսակ գետեղեց Լառնաքայի Յուշահամալիրին առջեւ:

ՀՀ Նախագահին փոխադարձ այցելութեան նպատակն էր, զարգացնել միջպետական համագործակցութիւնը երկու պետութիւններուն միջեւ, ինչպէս նաեւ ամրապնդել եւ աշխուժացնել փոխյարաբերութիւնները քաղաքական, տնտեսական եւ մշակութային բնագաւառներուն մէջ:

Յիշենք, թէ ՀՀ Նախագահին տեսակցութիւններուն ընթացքին, ընդհանրապէս անոր կ'ընկերանար Կիպրահայ Զամայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեան:

Պետական-պաշտօնական մակարդակի հանդիպումներ

Շաբաթ, 15 Յունուար 2011ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան դարձեալ տեսակցութիւն ունեցաւ «Այբ» խմբակցութեան հետ, քննարկելու համար Կիպրոսի մէջ Զայկական Երկրորդական Վարժարանի մը բացման կարելիութիւնները:

Ուրբաթ, 21 Յունուար 2011ին, Պրն. Մահտեսեան ծանօթացման հանդիպում մը ունեցաւ Իրանի Իսլամական Զանրապետութեան նորանշանակ դեսպան Ալի Աքպար Րիզայիի հետ:

Ուրբաթ, 28 Յունուար 2011ին, Կիպրահայ համայնքի Պետական Ներկայացուցիչը հանդիպում մը ունեցաւ Կա-

Նաչներու Կուսակցապետ՝ Եորղիոս Փերտիքիսին հետ:

Երեքշաբթի, 8 Փետրուար 2011ին, Պրն. Մահտեսեան ծանօթացման հանդիպում մը ունեցաւ Իսրայէլի Լորանդանակ դեսպան՝ Միքայէլ Զարարիի հետ, վերջինիս փափաքով:

Ուրբաթ, 18 Փետրուար 2011ին, Զայ Պետական Ներկայացուցիչը, ընկերակցութեամբ Մարոնիթ եւ Լատին համայնքներու Ներկայացուցիչներուն, տեսակցութիւն մը ունեցան Զանրապետութեան Նախագահ Տիմիթրիս Խրիստոֆիասին հետ, լուսաբանուելու համար Կիպրական հարցի վերջին իրադարձութիւններուն ամնչութեամբ:

Նոյն օրը, Պրն. Մահտեսեան հանդիպեցաւ Տնտեսութեան Նախարարութեան Զանրային Վարչութեան տնօրէն Կիպրոս Կիպրիանուի հետ, համադրելու համար Եւրոպական ծրագիրներու Կիպրոս-Զայաստան փոխյարաբերութիւններու գծով տարուելիք աշխատանքները:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառի այց



17-20 Փետրուար 2011ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ եռօրեայ աշխատանքային այցելութեամբ Կիպրոս

ժամանեց, որու ընթացքին, ան առիթը ունեցաւ տեսակցութիւններ ունենալու Թեմիս Ազգային Իշխանութեան պատկան մարմիններուն հետ:

Ուրբաթ 18 Փետրուարին, Վեհափառ հայրապետը ընթրիքի հիւրը եղաւ Պետական Ներկայացուցիչին ու իր ազնիւ տիկնոջ, Ներկայութեամբ Կիպրահայ ազգայիններու:

Շաբաթ, 19 Փետրուարի կեսօրուայ ժամերուն, Վեհափառը այցելեց Պետական Ներկայացուցիչին հովանիին տակ գործող Պարի Արուեստից Դպրոցը ու մտերմիկ խօսակցութիւն ունեցաւ փոքրերուն հետ:

Լուսաբանական հանդիպում



Ուրբաթ, 18 Մարտ 2011ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան լուսաբանական հանդիպում մը ունեցաւ Տիկին Երան Գուլումճեանին հետ, որու ընթացքին ի յայտ եկաւ թէ Տիկին Գուլումճեան, անտեղեակ էր «Ազատ Ձայն»ի թիւ 70, Մարտ 2011ի հրատարակութեան մէջ ներփակած թերթիկէն: Այս տխրահոռչակ եղելութեան լոյսին տակ, Տիկին Երան Գուլումճեան 19.03.2011ին «Կիպրահայեր» կայքէջին միջոցով յայտարարութիւն մը լոյս ընծայեց, որու մէջ յստակօրէն կը յայտնէ, թէ առանց իր հաւանութեան գետեղուած էր Միացեալ Համերաշխական Ճակատ ստորագրութիւնը կրող թերթիկը, որու բովանդակու-

կութիւնը բացարձակապէս չի բաժներ ան: Պետական Ներկայացուցիչը «Լրատու»ի այս թիւով եւ հրապարակաւ կը շնորհաւորէ Տիկին Երան Գուլումճեանը, իր յստակ ու յանդուգն դիրքորոշումին համար:

Ձեռնարկներու Ներկայութիւն

Շաբաթ, 22 Յունուար 2011ին, Պետական Ներկայացուցիչը ու իր տիկինը ներկայ գտնուեցան Նիկոսիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած «Առաքելոց» սենեկային երգչախումբի Սրբազան համերգին, սուիրած Չարեհ Սրբազանի եւ Գեորգ Գանտահարեանի յիշատակին:

Կիրակի, 23 Յունուար 2011ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեան ներկայ գտնուեցան «Մէկ մեռեալ միլիոնաւոր վիրաւորներ» նիւթով ոգեկոչման ձեռնարկին, կազմակերպութեամբ «Յրանդ Տիկնի բարեկամներ» խումբակցութեան, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ Goethe հիմնարկի սրահին մէջ:

Ուրբաթ, 28 Յունուար 2011ին, Պետական Ներկայացուցիչը ու իր տիկինը, ներկայ գտնուեցան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան կազմակերպած 120-ամեակի տօնակատարութեան ձեռնարկին, որ տեղի ունեցաւ Pasidy սրահին մէջ:

Շաբաթ, 5 Փետրուար 2011ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեան ներկայ գտնուեցան Լառնաքայի Հայ Ակումբին կազմակերպած ձեռնարկին: Օրուան բանախօսն էր Տիար Վարդան Թաշճեան նիւթ ունենալով «Մանուկները եւ Մենք»:

Շաբաթ, 12 Փետրուար 2011ին, Պետական Ներկայացուցիչը բացումը կատարեց Լառնաքայի «Նազարեան» անուշավաճառի հաստատութեան:

Շաբաթ, 19 Փետրուար 2011ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեան ներկայ գտնուեցան Արամ Ա. Կաթողիկոսին ի պատիւ սարքուած ընթրիքին, կազմակերպութեամբ Ազգային Իշխանութեան, որ տեղի ունեցաւ «Իւթիւճեան»

սրահին մեջ:

Հինգշաբթի, 3 Մարտ 2011ին, Պետական Ներկայացուցիչը ընկերակցութեամբ Վարուժան Սրբազանին, Hilton պանդոկին մեջ ներկայ գտնուեցան Հարաւ Արեւելեան Եւրոպայի Նախագահող Եպիսկոպոսներու 11-րդ խորհրդածողովին եւ անկէ ետք տեղի ունեցած ճաշերոյթին:

Կիրակի, 20 Մարտ 2011ին, Հայ Երիտասարդաց Միութեան Ակումբէն ներս, տեղի ունեցաւ Պետական Ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսանի թեկնածութեան ընտրապայքարի բացման հաւաքը, «Շարունակէնք Միասին» լուզուքով, որու ներկայ էին մօտ 400 անձեր:

Կիրակի, 27 Մարտ 2011ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեան ներկայ գտնուեցան ՀՕՄի «Սօսէ» մասնաճիւղին կազմակերպած աւանդական Միջինքի ճաշին, որ տեղի ունեցաւ ՀԵՄ-ի սրահին մեջ:

Ուրբաթ, 8 Ապրիլ 2011ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան ներկայ գտնուեցաւ ՀՕՄ-ի «Սօսէ» մասնաճիւղի եւ Տիար Ռուբէն Նահապետեանի կազմակերպած Ֆրանսահայ արուեստագետ՝ Կարապետ Մովճեանի նկարչական ցուցահանդեսին, որ տեղի ունեցաւ «Իւթիւճեան» սրահին մեջ:



Շաբաթ, 9 Ապրիլ 2011ին, Պետական Ներկայացուցիչը ներկայ գտնուեցաւ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ պաշտամունքին, որու հիւր դասախօսն էր՝ Վերապատւելի Դոկտ. Վարդգէս Քասունի:

Երկուշաբթի, 11 Ապրիլ 2011ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան հրաւիրուեցաւ ու ներկայ գտնուեցաւ KISA-ի եւ Minority rights group International-ի կազմակերպած աշխատանքային հանդիպում-ճաշին, որ տեղի ունեցաւ Chateau Status ճաշարանին մէջ:

Նոյն օրը երեկոյեան, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեան ներկայ գտնուեցան Հայ Աւետարանական Եկեղեցւոյ կազմակերպած Մանուէլ Ս. Քասունիի գիրքի շնորհահանդեսին եւ Նուարդ Քասունի-Փանայիոթիտիսի պարգեւատրումին, որ տեղի ունեցաւ «Իւթիւճեան» սրահին մէջ, նախագահութեամբ Պետական Ներկայացուցիչին:



Երեքշաբթի, 12 Ապրիլ 2011ին, Պրն. Վարդգես Մահտեսեան բացումը կատարեց ու իր տիկնոջ հետ ներկայ գտնուեցան Սեւան Մալիքեանի նկարչական ցուցահանդեսին, որ տեղի ունեցաւ Լառնաքայի Kypriaki Gonia Gallery-ին մէջ:

Կիրակի, 17 Ապրիլ 2011ին, Տէր եւ Տիկին Վարդգես Մահտեսեան ներկայ գտնուեցան Զամազգայիի «Օշական» մասնաճիւղի «Դիմակ» թատերախումբի «Կես Զայ Լոս Անճելըսի մէջ» թատերական ներկայացումին, բեմադրութեամբ Նաթաշա Թաւուքճեանի:

Շնորհաւորագիր

Կիպրահայ Զամայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգես Մահտեսեան, 25 Փետրուար 2011 թուակիր յատուկ գիրով մը, շնորհաւորեց Տիար Զրայր Ճեպեճեանը «Զայուն Գոյապայքարի Ճանապարհը» գիրքի հրատարակութեան ուրախ առիթով, որու շնորհահանդեսը տեղի ունեցաւ 28 Փետրուար 2011ին, Պէյրութի Զայկազեան Զամալսարանէն ներս:

Պետական Ներկայացուցիչը 4 Մարտ 2011ին, շնորհաւորագիր մը յղեց Նորանշանակ Մարդկանց Իրաւապաշտպանին (Ombudsman) Տիկին Էլիզա Սավիտուին, անոր մաղթելով յաջողութիւն իր առաքելութեան մէջ:

Պրն. Վարդգես Մահտեսեան, թէկուզ ուշացումով 15 Մարտ 2011 թուակիր նամակով մը, շնորհաւորեց Բրիտանական Օդուժի Առաջին Կարգի Օդաչու՝ Վերթեան Տիրան Գասապեանը իր ստացած յուշամետալներուն համար:

Պետական Ներկայացուցիչը 28 Մարտի յատուկ գիրով մը, շնորհաւորեց Եաննօ Գույումճեանը, Թրոտոսի Զամակիպրական Դահուկարշաւի (ski) ախոյեանութեան մրցումներուն՝ առաջին դիրքը գրաւելուն համար:

Վարդգես եւ Մակի Մահտեսեաններ
 Քրիստոսի Յարութեան
 Սուրբ տօնին առիթով
 կը շնորհաւորեն Կիպրահայ Չամայնքը
 եւ մեր հայրենակիցները
 մաղթելով՝
 առողջութիւն եւ արեւշատութիւն
Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
Օրհնեալ է Յարովթիւնն Քրիստոսի

ԿԻՊՐԱՅԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Քաղաքական Գրասենեակ

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos
 Հեռախօս 22- 45 45 40, Հեռատիպ 22- 42 46 42
 Ել. Հասցէ office@armenianmp.com
 Ոստայնէջ՝ <http://www.armenianmp.com>

Խորհրդարանական Գրասենեակ

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia
 Հեռախօս 22- 40 72 02, Հեռատիպ 22- 40 74 42
 Ել. Հասցէ vmahdessian@parliament.cy